ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ
ԻՄ ՔԱՅԼԸ ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄ
ՊԱՐՈՆ Գ. ԵՐԻՑՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Երիցյան.

Ի պատասխան Ձեր 10.05.2019թ. գրության՝ «Երևանի քաղաքապետարանի, ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության, «Հայ առաջադեմ երիտասարդություն» ՀԿ-ի և շվեդական Fryshuset կազմակերպության միջև համագործակցության վերաբերյալ» փոխըմբռնման հուշագրի մասին, տեղեկացվում է.

Հստակ չէ քառակողմ հուշագրի կնքման նպատակն ու անհրաժեշտությունը՝ հաշվի առնելով, որ հուշագրի կնքումն ինքնին ենթադրում է որոշակի պարտավորություններ Երևանի քաղաքապետարանի համար: Միաժամանակ հստակ չէ, թե կոնկրետ ինչ գործունեություն է ծավալելու վերոնշյալ հասարակական կազմակերպությունը, քանի որ բացակայում է գործողությունների ծրագիրը:

Առաջարկվում է հուշագրի նախագծի սկզբնական մասում, 2-3 նախադասությամբ սահմանել կողմերի հստակ նպատակները, ինչպես նաև հանել «Փոխըմբռնման հուշագրի կողմերի նպատակները» վերնագրի ներքո գտնվող բոլոր դրույթները, քանի որ այնտեղ զուտ նկարագրային մաս է և ընդհանուր ձևակերպումներ:

Հստակեցման կարիք ունի երիտասարդական կազմակերպությունների կողմից երիտասարդների հզորացման և ակտիվացման ուղղությամբ իրականացվելիք միջոցառումները:

Պարզ չէ, թե հուշագրի շրջանակներում երիտասարդների գործուղումները, Երևանի քաղաքապետարանի ներկայացուցիչների այցը Շվեդիա, ինչպես նաև Երևանի երիտասարդության իրավիճակի ուսումնասիրության ու քարտեզագրման աշխատանքներն ինչ ֆինանսական միջոցներով է իրականացվելու:

Միաժամանակ տեղեկացվում է նաև, որ փոխըմբռնման կողմ հանդիսացող ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարությունը, համաձայն «Կառավարության կառուցվածքի և գործունեության մասին» օրենքի 2-րդ հոդվածի, վերակազմավորվել է ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ